



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ. փոստ /E-mail/ эл.почта: e.pirumyan@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 58 54 19
☎ (374 10) 54 08 57

№ 5/12.1/51430
<<30>> 05 2014 թ.

Գավառի բնապահպանական տեղեկատվական
հասարակական <<Օրիուս>> կենտրոնի
համակարգող տիկին Լ.Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան Ձեր 2014 թվականի մայիսի 15-ի թիվ AA-009 գրության, հայտնում եմ, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը <<Հիդրո կորպորացիա>> ՍՊԸ-ին 02.11.2004 թվականին տվել է N 0545 ջրօգտագործման թույլտվություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մադինա համայնքի վարչական տարածքում Արգիճի գետի վրա <<Արգիճի>> ՓՀԷԿ-ի կառուցման նպատակով թույլտվությունը տրամադրվել էր 02.03.2005թ. գործունեության ժամկետով, պայմանով, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից <<Հիդրո կորպորացիա>> ՍՊԸ-ին լիցենզիա տալու դեպքում, ջրօգտագործման թույլտվության ժամկետ է սահմանվելու մինչև լիցենզիայով նախատեսված ժամկետը (ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից <<Հիդրո կորպորացիա>> ՍՊԸ-ն 19.11. 2004 թվականին կառուցման նպատակով ստացել է N0149 լիցենզիան):

<<Հիդրո կորպորացիա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Արգիճի>> ՓՀԷԿ-ի կառուցման նախագծային փաստաթղթերին 07.07.2006թ. տրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն՝ ԲՓ-70: Կից ներկայացվում է եզրակացությունը:

ՓՀԷԿ-ի կառուցման աշխատանքներն ավարտելուց հետո ընկերությունը 26.12.2013 թվականին դիմել է ՀՀ բնապահպանության նախարարություն՝ <<Արգիճի>> ՓՀԷԿ-ի շահագործման նպատակով ջրօգտագործման թույլտվության ստացման հայտով և 21.03.2014 թվականին ստացել N 000031 ջրօգտագործման թույլտվությունը, մինչև 21.03.2017 թվականի գործունեության ժամկետով:



<<Հիդրո կորպորացիա>> ՍՊԸ <<Արգիճի>> ՓԸԿ-ի սնուցող խողովակաշարի նախկին վթարների պատճառով համայնքի բնակիչներին հասցված վնասները ընկերության կողմից փոխհատուցվել են, իսկ Վերին Գետաշենի գյուղապետարանի ենթակայության հողատարածքները չեն վնասվել:

2014 թվականի մայիսի 13-ի վթարի հետևանքով առաջացած վնասի չափը ճշտվում է հանձնաժողովի կողմից: Վթարի հետևանքով ողողահուններում առաջացած փոսերը ընկերության կողմից հարթեցվել են:

<<Հիդրո կորպորացիա>> ՍՊԸ <<Արգիճի>> ՓԸԿ-ում ստուգում իրականացվել է 2013թվականին:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝




Է. Փիրոմյան



Ա. Վարդանյան
523835

Հ Ա Ս Ս Ա Տ ՈՒ Մ Ե Մ

ՀՀ բնապահպանության նախարարության
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննության մասնագիտական
իրավասության հավաստագիր տվող և
շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական եզրակացությունը
հաստատող հանձնաժողովի» նախագահ


Վ. Այվազյան
«ՕԷ» հայկախ 2006թ.
(արձանագրություն թիվ 04, «06» 07 2006թ.)

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ թիվ ԲՓ- 70

« 07 » 07 2006 թ.

**«Հիդրո կորպորացիա» ՓԲԸ կողմից ներկայացված «Արգիչի» ՓՀԷԿ-ի
կառուցման աշխատանքային նախագծի վերաբերյալ**

Պատվիրատու՝

«Հիդրո կորպորացիա» ՓԲԸ

Նախագծողներ՝

«Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝

- Աշխատանքային նախագիծ.
- ընդհանուր բացատրագիր,
 - նախագծահաշիվ,
 - գծագրական մաս,
 - ՀՀ կառավարության որոշումներ 01.06.01թ թիվ 710-Ն և 18.09.05թ թիվ 1319-Ն,
 - Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական,
 - ջրօգտագործման թույլտվություն թիվ 0545
 - ՀԷԿ-ի կառուցման լիցենզիա թիվ 0149

Տեղադրման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ

Համաձայն ՀՀ կառավարության 18.09.05թ թիվ 1319-Ն և 01.06.01թ թիվ 710-Ն որոշումների և Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վակայականների

Handwritten signature and date

«Հիդրո կորպորացիա» ՓԲ ընկերությանը հատկացվել է 7.55հա տարածք ՀԷԿ կառուցելու նպատակով:

«Արգիչի» ՀԷԿ-ը գտնվում է Գեղարքունիքի մարզում և ընդգրկում է Արգիչի գետի հոսանքի միջին հատվածը:

Տեղանքի բացարձակ նիշերը տատանվում են 1970-2270մ սահմաններում: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը տատանվում է 3-6 աստիճանների սահմաններում: Մթնոլորտային տեղումների քանակը տարում տատանվում է 550-770մմ սահմաններում:

Արգիչի գետը հանդիսանում է Մևանա լճի կարևոր վտակներից մեկը և լցվում է լճի մեջ հարավ-արևելքից: Գետը սկիզբ է առնում Գեղամա և Վարդենիս լեռների միացման կետից 2600 վրա և հոսում է դեպի հարավ:

Արգիչի գետի ընդհանուր ջրհավաք մակերեսը կազմում է 384քկմ, երկարությունը 51կմ է: Արգիչի գետի ընդհանուր անկումը 410մ է, միջին թեքությունը 14%, ջրհավաքի միջին բարձրությունը 2460մ: Արգիչի գետը տիպիկ լեռնային գետ է, ունի խառը սնուցում՝ ձյան, անձրևի, գրունտային ջրերի տեսքով:

Արգիչի ՀԷԿ-ի համալիրը բաղկացած է.

- գլխային հանգույցից,
- ճնշումային դերիվացիոն խողովակաշարից,
- ՀԷԿ-ի շենքից:

Գլխային հանգույցը բետոնյա ջրթափային պատվար է 10մ բարձրությամբ, 40մ զազաթի երկարությամբ, այդ թվում՝ ջրթափային մասը՝ 24մ: Պատվարի զազաթի նիշը 2250մ: Պատվարի ներքին թիեֆում էներգիայի մարումը կատարվում է ջրածեծ սալի միջոցով: Ջրթող մաքրիչը 25.5մ երկարությամբ և 1.5մ լայնությամբ, կահավորված է մուտքի և ելքի կարգավորիչ փականներով:

Տղմագտարանի վերջնամասում նախատեսված է դերիվացիոն ջրատարի ջրընդունիչ՝ իրեն կարագավորիչ փականով:

Գլխային հանգույցի աջ ափում տեղադրված է աստիճանաձև ձկնացարանը՝ 1.5մ լայնությամբ, 0.5խմ/վրկ հաշվարկային ելքով:

Ճնշումային ջրատարի երկարությունը 9527մ, տրամագիծը 1420մմ: Խողովակաշարը տեղադրվում է 2.4մ խորությամբ խրամուղու մեջ հակակոռոզիոն մեկուսացումից հետո: Դերիվացիոն ջրատարի առավելագույն հաշվարկային ելքը ընդունված է 4.0խմ/վրկ:

«Արգիչի» ՀԷԿ-ի շենքը գտնվում է Արգիչի գետի ձախ ափին 78x36մ չափսերով հրապարակում: Բացի շենքից տեղադրվելու են օժանդակ կառույցներ (տրանսֆորմատորային շենք և կեղտաջրերի հոր): ՀԷԿ-ի շենքը ե/բ կարկասով շենք է 42x9մ չափսերով՝ 10.8մ բարձրությամբ, որտեղ նախատեսվում է տեղադրել 4 հատ շերտփակոր տուրբիններ, կամրջային ամբարձիչ 16տ բեռնաբարձությամբ:

ՀԷԿ-ի շենքում տեղադրված հիդրոազդեցատներն ունեն ավտոմատ կարգավորման և դեկավարման համակարգ, ինչը ապահովում է կայանի նորմալ աշխատանքը ավտոմատ ռեժիմով: ՀԷԿ-ի օգտագործված ջրերը հեռացնող ջրանցքով նետվում են դեպի գետ:

Համաձայն ներկայացված նախագծի ՀԷԿ կառուցման ընթացքում նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- սահմանված կարգով ընդունված է գետի բնապահպանական մվազագույն ելքը, որը հավասար է 1.0խմ/վրկ,
- ձկնատեսակների պահպանման նպատակով նախատեսված է տեղադրել աստիճանաձև ձկնուղի, որը թույլ է ապահովում պահպանել գոյություն ունեցող ձկնաշխարհը,
- ՀԷԿ-ի շենքի մոտ նախատեսվում է ցանկապատել, բարեկարգել և կանաչապատել ծառերով և թփերով, որի համար նախատեսվում է ծախսել 11561.09 հազ. դրամ:

«Արգիչի» ՀԷԿ-ը կունենա հետևյալ հիմնական ցուցանիշները.

- դրվածքային հզորություն՝ 8.40Մվտ,
- հաշվարկային ճնշում՝ 253.1մ,
- հաշվարկային ելք՝ 4.0 խմ/վրկ,
- էներգետիկական հոսք՝ 50.1 մլն.խմ,

- էլեկտրական էներգիայի միջին բազմատարյա արտադրանք՝ 30.5 մլն. կվտ/ժամ:

Արտադրված էլեկտրաէներգիան նախատեսվում է տալ ՀՀ էներգահամակարգին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բնապահպանության նախարարությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասնագիտական իրավասության հավաստագիր տվող և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը հաստատող հանձնաժողովի» որոշմամբ «Հիրո կորպորացիա» ՓԲԸ կողմից ներկայացված «Արգիշի» ՓՀԼԿ-ի կառուցման աշխատանքային նախագծի վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն:

Փորձագետ՝



Լ. Բալայան